

ԱՄԺԱՆՈՒՄ ԱԳՐՈՒԹԻՒՆ
Պուշկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի հա-
մար Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »
Անկերիկայի համար
Տարեկան 3 ռբ.
Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ
Մանուգան սոյր սոսաջին
եփեսոսի համար 40 սանթիմ
ե. իսկ վերջին երեսի հա-
մար 20 սանթիմ ե. երեքին
աւելի անյաւանկու համար
20 ՍԿ զեղջ կըլլայ :

Վառեայի համար ձեռք 10 սանթիմ

ՇԱՐՄ

Նախկ եւ դրան դրկն
Խմբագրութեան հասցիի
—
Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна
Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie)
—
Կոնսպիւսի եւ չնն տուի
Արտասահմանի ձեռք
(20 ՍԱՆԹԻՄ)
Պուշկարիոյ համար ձեռք
= 15 ՍԱՆԹԻՄ =

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՄ ՕՐԵՐԸ

ՍԶԳ

Մեր չի վճարող բաժանորդներէն կը խնդրենք շտապեն բաժնեգրները զրկել, որպէս զի մենք ստիպուած չըլլանք ամէնքըն ալ մէկիկ մէկիկ խայտառակել հրապարակաւ :

ՅԱՅՏԱՐԱՅԻՆ

(-)(-)

(Արտասպառած ԴՐՕՇԱԿէն)

Միտ թեան բանակցութիւններու առթիւ մեզ գիտող ընկերներուն կը յայտնենք որ այդ բանակցութիւնները առեւտրէ մը ի վեր վարող չէզոք անձնատրու թեւէն ստացուած գումարները համաձայն շուտով անոր վերջնական խօսքին կուստուի : Ամբողջ սըրտով կը փափաքինք որ այդ խօսքը նպատակաւ ըլլայ յիշատակական բոլոր անկեղծ տարրերու միութեան :

ԱՐՆԻՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

ԱԶԳ

—o—

Թաղական խորհուրդս ներկայիս կը յայտնէ վառայի հայ հասարակութեան թէ իւր գպրուցը պահելու, ինչպէս նաեւ ձկնղեցւոյ անմիջական պէտքերը հոգալու վարժարանին և եկեղեցւոյ հին պարտքերն չը կրկնապատկելու համար պարտաւորեցաւ ազգ. կամաւոր տուրքի սովորութեան հետեւիլ ըստ ազգ. սահմանադրութեան գծած օրէնքին : հետեւաբար իւր սոյն որոշումը իկիր արկանելու համար խորհուրդս իւր վերջին նիստին մէջ նիստողութիւն առնելով նախապէս առ այս տեղոյս հայ գաղութին վիճակագիրը, խըզ-ճմտաբար ամէն ազգային անհատի վրայ ազգային տուրք մը վճարած է, որուն հաւաքումը թաղական խորհուրդս անձամբ պիտի կատարէ յառաջիկայ երկու-

շարթի օրու ընէ սկսեալ, վստահ վարնայսբնակ ազգայնոց այն ազնիւ զգացումներուն որք անշուշտ ունին դէպի իրենց ազգ. վարժարանն և սիրելի եկեղեցւոյն որոյ պահպանութիւնը ամէն հայ քրիստոնէի նուիրական պարտականութիւնը կը կազմէ :

Ի դիմաց թաղական խորհուրդոյ Ատենադպիր Ատենապետ Ս. ԳԱՐԻԷԼԵԱՆՆ Ե. Մ. ԹՈՎՄԱՍՅԱՆ 5 հոկտ. վառնա

ՊԵՏ Բ ԲԱԶԱԼԵՐԵԼ

Դժբաղդ են Բուլգարիայի հայ դատարարները, որովհետեւ նրանք ոչ մի տեղ կանոնաւոր ուղիով չեն ստանում, որ կարողանան ոչ միայն իբրեւ դատարարներ լաւ ապրել, այլ և իբր սովորական քաղաքացիներ : Բայց աւելի դժբաղդ են Բուլգարիայի ազգային հայ մանուկները, որոնք ոչ ուտելու հայ ունին, ոչ հագնելու զգեստ, ոչ գրելու թուղթ և գրիչ, ոչ էլ կարգալու գիրք :

Այդ բոլորից զուրկ է ազգային հայ մանուկը Բուլգարիայում բայց և ուսման ծարաւ ունի : նրանց մի մասը մի կերպ պաշտպաններ է գտնում, սակայն այդ պաշտպանները գործը լինում է միայն մի կամ երկու ֆրանկ ուսման վարձը վճարել և ուրիշ ոչինչ :

Միս պէտքերի հոգսը մնում է ազգային մանուկի ազգային ծնողներին : Ում ի՞նչ փոյթը, ով ուղում է թող մտածէ այդ պէտքերի մասին :

Ազգային սովորող մանուկները օգնութեան հարցը այնքան հասունացել է, այնքան աչք է ծակում վարնայի երկսեռ վարժարաններում, որ ուրիշ դպրոցի աշակերտները, իրենց անհասուն տեղով, զգացել են օգնութեան հասնելու անհրաժեշտութիւնը և ընկերութիւն են կազմել իրենց չքաւոր ընկերներին օգնելու համար :

Պճարժու մի մէջ տպագրվեց այդ մանկական բարեգործ ընկերութեան յայտարարութիւնը : մեր մի աշխատակիցը, պ. էն, հրատարակեց հասարակութեան ուշադրութիւնը այդ ընկերութեան վրայ, իսկ մենք շեշտում ենք որ վարնայի հայ հասարակութիւնը, եթէ զգացմունքի կտոր ունի իւր սրտում, եթէ ամենաչնչին չափով անգամ զգում է ազգային մանկան դատարարութիւն տալու պէտքը, պարտաւոր է քաջալերել այդ մանկական ընկերութիւնը, թէ մանուկին օգնութեան հասնելու և թէ նրան բարի դործերի մէջ քաջալերելու համար :

ՎԱՐՊՕ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

ՇԱՐՄԻՍԻ ԱՆԵՍԱՍԿԵՆ ՄԱՍՆԱՌՈՐ
Հեղագիրներ

«Բոլորիքէ Բոլորստանս» լրագիրը Պոլսէ կիմանայ թէ այս անգամ հայկական ջարդերը միայն Մուշի շրջակայքերը տեղի ունեցած են :

Նոյն հեռագրէն կիմացուի թէ հոն զրկուած քննիչ յանձնախումբը յայտ յանդիման քիւրտերուն կողմը կը բռնէ, քանի մը կայտառած եւ բռնութեան տակ խուած սուս վկայութիւններ մէջ բերելով :

Գիւղերու գայմազամները ամէնքն ալ քրտերուն նպատակաւ վկայութիւններ տուած են :

Վախ կայ թէ բազմաթիւ հայեր յանդիման դատարարութիւն են թարկուին եւ դատապարտուին :

— Իսկիւրպէ կը հեռագրուի թէ Ազիր անուն նշանաւոր աւազակապետը երբ քրտոտնեայ ազնիւներ առեւանգած է եւ մեծ փրկանքներ կը պահանջէ զանոնք ազատ արձակելու համար :

Յիշեալ աւազակը բազմաթիւ քրտոտնեաներ կողոպտած եւ ջարդած է : Ուրիշ նշանաւոր աւազակ մը, Մուհարիմ անուն, Տուպուկի գիւղին բնակիչները ստիպած է 600 սամ սակի տալ իրեն, հակառակ պարագային զիւր կրակի տալ սպառնալով :

— Սօփիայէ կը հեռագրուի թէ Պ Տալիտով, նախկին դեր նախագահ Մակ. յիշ. կոմիտէին յայտարարած է որ Սարաֆօֆ ժամանակէ մը ի վեր Օսկա կը գտնուի եւ թէ անհնարին

է որ ան մասնակցութիւն մը ունեցած ըլլայ ամերիկացի միսիսթարուհի Միսս Էլէն Սթոնէի առեւանգման խնդրին մէջ :

«Վիէնէր Թակալաթ» թերթին թղթակիցը կը հաւատէ թէ աւազակները թրքական հողէն Պուլկարիա անցած եւ ապա ետ դարձած են ի Թուրքիա :

— Վիէնայէ կը հեռագրուի : Ֆէրտինանտ իշխանը Բեթերսպուրկ պիտի երթայ յառաջիկայ դեկտեմբերին ընկերակցութեամբ Ազգայնաւոր Բ. ազատարար կայսեր արձանի կանգման յանձնախումբին անդամներուն :

Իշխանը եւ յանձնախումբը Բեթերսպուրկ կերթան հրատարակելու Ձառք որ Սօփիա երթայ, ներկայ զբանուելու համար նոյն յիշատակարանի բացման հանդէսին :

Իշխանը պիտի նուրիք Ձարին նոյն արձանին պրոնզէ մանրանկարը :

— Մանաստը քաջուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ տեղոյն ֆերտինանտի գեր հիւպատոսը, զբոսարանէ մը դուրս ելած միջոցին յարձակում կրեր է հինգ թուրք զինուորներու կողմէ որոնք զինքը նախատած եւ սպաննել փորձած են :

Դեր հիւպատոսը յուսահատօրէն, զիմացելով, ժամանակ առեւտրէ է ստիկանութեան օգնութեան հասնելու եւ զինքը ստոյգ մահուանէ մը փրկելու :

— «Քէօլիշէ Յայթուրկ» կիմանայ թէ Մոնթենէկրոի իսլամ ժողովուրդը սաստիկ եռուզեռումով մէջ է այն պատճառաւ որ քրտոտնեայ սեւ լեռնցիներ Բուհարայէն շրջա թրքոհիւներ առեւանգելով հեանրին բռնի կերպով ամուսնացած են :

— «Միսնք Յուրթի Յայթուրկ» կիմանայ թէ ամերիկեան «Նիւ-Նորթ Զերսոյա» լրագիրը 25000 անգլ. սակի նուիրած է ամերիկացի միսիսթարուհի Միսս Էլէն Սթոնէի թուրք կամ պուլկար աւազակներու ձեռքէն փրկելու համար :

Յիշեալ միսիսթարուհին Սօփիա Ֆէրտինանտ իշխանին նամակ մը գրելով պաղատած է որ զինքը աւազակաց ձեռքէն փրկէ :

Ի մէջ այլոց գրած է հետեւեալները :
«Բարայրի մը մէջ կը գտնուի եւ աւազակները խտրել կը հօկին իմ վրաս :
«Երկար տեսն ուրբով քաջելով բոկոտն մնացի եւ ուրբով կարիւնստին»
«Եթէ աւազակներուն խնդրած գումարին առաքումը ուշանայ ողջ չի պիտի գտնաք զիս :
«Ընկերուհիս հիւանդ է» :
— Պոլսէն կը հեռագրուի թէ թուրք

կառավարութիւնը արգիւնը ուզած է յայն պատրիարքին քննական պատուարը թուրքիոյ զանազան կողմերը :

— Պոլսէ կը հեռագրուի թէ սուսական դեսպան Պ. Չինովիւզ երկար տեսակցութիւն մը ունեցած է Սուլթանին հետ հայկական եւ քրտնաթուրք ինքիքներու մասին :

— Անշուշտ թերթը հիմանաւ թէ Պ. Տանէզ Պաշկարիս արտաքին գործոց նախարարը խնդրած է Աւստրո-Հունգարական կառավարութենէն, Մակեդոնական ինքիքին, Եւրոպայի ճեղքով լուծուելու նախաձեռնութիւնը ստանձնէ :

Կլուխովակի մերժած է :

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ



Բրո Արմէնիայի խմբագրութիւնը պարսկական Ռէշտ քաղաքէն հետեւեալ հեռագրերը ընդունած է :

«Յուլիս 25էն սկսեալ Մուշի շրջականները բոցերու եւ արեան մէջ են :

Մասնիկ. Բարսիլ, Իկթար Սաքլան Տաւրիկի կիլիկիական, Ենիկի գիւղերը աւերուած են : Աւերուած գիւղերուն մոխիրներուն վրայ կը տեղաւորուին քիւրտ աշիրէթները : Աւերումը կատարուած է զինուորներու եւ քիւրտերու ձեռքով :

Ստիպողական է անմիջապէս պետութեանց դիմում ընել :

Պոլսէն սեպտ. 23 թուով Պէրլինէր Լօքալ Անգլէժէյր«ին կը հեռագրեն :

«Սասունը չորս թիւրք վաշտերու կողմէ այնպէս պաշարուած է, որ մինչեւ իսկ կէս ժամ հեռու

գտնուող Մուշ մէջ չի դիտարկուած քաղաքական պէտքերը ինչ կանցնի, կը դառնայ Սասուն : Ամենագէշ ըսնելէ կը վախցի : Հոս ամէն լուր կը պահուի : Հայոց Պատրիարքարանը Դրան հաւանութեամբ բարձրաստիճան հոգեւորական մը զրկեց Մուշ այնտեղի անցուդարձներուն մասին լուրերը առնելու համար : Կըսուի թէ մեծ թուով քիւրդեր կը գտնուին Սասունի մէջ : Պարտած լուրերուն նախելով՝ այնտեղի գործողութիւնները ուղղակի ելլողը կէն կը զեկաւարին, առանց կառավարութեան գիտութեան, ինչպէս նաեւ դէպի նահանգները առաքուիլ բազմաթիւ իւլէմաներու, որոնց զրգռիչ գործունէութեան կը վերագրուին արդէն Սասուն, նոր դէպքերը : Ընդհանուր կացութիւնը նման է հինգ տարի առաջուան կոտորածներէն առաջ տիրող վիճակին» :

Կ. Պոլսէն սեպտ. 25 թուականով Պիրանքիորթէր Յայթիւկային կը հեռագրեն :

«Հայկական նահանգներէն դեպքներուն շրջանը ըլլալը ծանուցած շատ մը հիւպատոսական տեղակալները չեն հասած կ'ենթադրուի թէ թիւրք իշխանութիւնները վար գրած են պանոնք : Էրզրումի ֆրանսական հիւպատոսարանի թարգմանը, որ տեղեկատուութեան համար հոս կանչուած էր, տեղւոյն կուսակալին կողմէ երկու անգամ ճամբորդութենէն արգիւնուելու է : Իհսպանաստան գործակալաւոր Բապտ

բաց հեռագիր մը ուղղեց վալիին, որ զինք անձնապէս պատասխանատու կը բռնէ, եթէ շարունակէ հակառակիլ թարգմանին ճամբորդութեան» :

ՓԻՆԼԱՆՏԻԱ

Անցեալ օր «Պարմուսի» ընթացողները անշուշտ կարգացին Ֆինլանտայինը բողոքի մասին, որ Չարին ուղղուած էր զինուորական նոր կարգադրութիւններու մասին, ինչպէս եւ կարգացին որ Ֆինլանտայի ծեղկոտին անդամները անձամբ Չարին յայտարարած են թէ՛ իրենց խղճին հակառակ է քուէ տալ յօգուտ Չարին կարգադրութիւններուն, որոնք վնասակար են իրենց հայրենիքի համար :

Ֆինլանտայիները քանի մը միլիոն ժողովուրդ են, համեմատաբար ուսուներու դիմաց աւելի քիչ, քան հայերս թուրքերուն դիմաց : Իսկ եթէ համեմատենք Ռուսիոյ հետ, այն ժամանակ ֆինլանտայիներուն ըրածը կատարեալ յիմարութիւն, երեւակայութենէ գորս խենթութիւն ուրիշ համարենք : Եթէ ոչ մինչ, գոնէ մեր կարգ մը հայրենասէրները, որոնք ամէն օր եւ ամէն ժամ հայերու գլխուն գայլի աւետարան կը կարգան թէ պետք չէ թուրքերուն դէմ բողոքել, որովհետեւ անոնք մեղմէ շատ չորաւոր են, կը կատարին եւ մեզի աւելի կը ճնշեն :

Կէս միլիոն ֆինլանտայի ստու

րագրեր են այդ բողոքին տակ. եւ բողոքը որո՞ւն դէմ է, ուս Չարին դէմ : որու ստորուն տակ օրը տասն անգամ կ'ըմպօջտիկ կընեն 38 միլիոն ֆրանսացիները :

Երեւոյտի անդամները Չարին հպատակները յանդգներ են անձամբ Չարին յայտնելու իրենց հայրենասիրութիւնը եւ անոր կարգադրութիւններուն վնասակար լինելը իրենց հայրենիքին համար : Այն Չարին, որուն առջեւ քանի մը հատ խոշոր ու մեծ վեհապետներ չեն յաղագնիր անկեղծաբար իրեն մէկ պակասութիւնը մատնացոյց ընել :

Ճամարիտ այսպիսի հպատակ ժողովուրդներու, այսպիսի քաղաքացիներու արիւթեան առջև մարդ կը չուարի ու կը մնայ :

Ֆինլանտայի. թրանսվալցի ֆուպայի, Ֆիլիպպինցի, Կիէտացի ամէնքն ալ բուռ մը ժողովուրդներ են, սակայն այնպէս հիս ամենամեծ ու զօրեղ պետութիւններուն կը դիմագրեն, իրենց հայրենիքը, իրաւունքները, պատիւնին կը պաշտպանեն : Խնդիրը հայրենիքին շահերուն եւ պատուութեան դալուն պէս արդ լուրի մնջիկ քաղաքացի երկրագործ, խաշնարած ժողովուրդները աւրժ կը գտնան եւ կ'ուր կը մղեն իրենց վրայ բռնացողներուն դէմ :

Բայց հայր, հայր ի՞նչ կընէ : Հայու ձեռքէն ուսը զարթոնք կը խլէ եւ հայր կը լռէ : Թուրքը կը կոտորէ, հայը նոյնպէս կը լռէ : Միթէ այդ փոքրիկ ժողովուրդներէն ամէնէն խիստին հայն է եղբօր : Եթէ իրաւ է հա

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՃԱՍԿԱՆԱԼԻՆ

VI

Բ.

Մարդի առջին ձգտումն է ապրել, իր գոյութիւնը պահպանել աշխարհի վրա : Թէ եւ այդ կեանքը եւ դոյութիւնը անասնական լինի :

Ինչ իրաւունք ունէք նրան ստիպելու իր կեանքի ձեւը փոխել, այդ կեանքը փասնոր ենթարկելու չափով, պատասխանեցի ես :

— Ճիշդ ես ասում, պատասխանեց Վահէն : բայց ես իսկապէս չեմ է ստիպում նրան իր կեանքի ձեւը փոխել, եւ ոչ էլ ո եւ է հայ յեղափոխական : Սարկացած տմբոյր իր հնագնդութեամբ ստրկական պայտաններ է ստեղծել : ես, կամ հիմա կ'ուր մը զող հայ յեղափոխականը իր սիրած ձեւով ապրելով, այսինքն ըմբոստանով ուղղակի կերպով ժողովուրդին չէ ստիպում փոխել իր կեանքի ձեւը : Ինչպէս յեղափոխականը իրաւունք

չունի զօրով փոխելու ստրկի կեանքի անասնական ձեւը, նոյնպէս ժողովրդական բազմութիւնը իրաւունք չունի ըմբոստ կեանքով ապրող իր եղբայրներին ստիպելու միշտ ստրուկի կեանքով ապրել :

— Բայց այդպէս չի կարելի դատել անհատների կամ քիչերի ըմբոստացումը միացած մեծ բազմութեան գրելիս արհաւիրքներ գալու պատճառ է լինում : նրա ստացվածքը ոչնչանում է, ընտանիքը անպատում : նրա կարծիքով ըմբոստացումով հայրենիքը, ազգը աւելի վնասվում են, քան թէ օգտվում :

— նրա կարծիքով այդպէս է, իսկ իմ կարծիքով էլ ընդհակառակը : ըմբոստացումն է, ազատութեան եւ ազգային ինքնուրոյն անկախ կեանք ձեռք բերելու ձգտումն է որ փրկու մէ ազգը եւ հայրենիքը : Եւ իսկապէս այդ տեսակ վիճել չէ կարելի : վիճարանութեամբ դժուար է որոշել թէ ո՞վ է աւելի օգտակար հայրենիքին բռնութեան դէմ գործնական կրուի մղողը, թէ ըստ թեամբ բռնութեան հնազանդողը :

Առ հասարակ վերջի վերջոյ, ամէն ժողովուրդների մէջ յաղթող է հանդիսանում ըմբոստների յեղափոխական գաղափարը : Ի հարկէ եթէ ժողովուր

դը քաղաքացիական սրտ ձգտումներ եւ հասունութիւն ունի : Եթէ ժողովուրդը այդ յատկութիւնից զուրկ է, ըմբոստները հեռագնդէ անբնօյթանում են համբերող ժողովուրդն էլ կամաց կամաց անկետանում է : Աշխարհի մեծ ազգերը այդպէս են ոչնչացել :

Այդպէս են ոչնչանում եւ հասարակութեան մէջ չը մաքաւուող ընտանիքը եւ անհատը :

Դու չես մաքաւում քեզ սպառնացող ո եւ վտանգի դէմ, բայց իրաւունք չունես ինձ արգիւնելու մաքաւել նոյնանման վտանգի դէմ :

Ես կը մաքաւում եւ համոզված եմ թէ երբ տեսես իմ մտքաուրը աւելի օգտակար է, առանց իմ կանչելու կը գաս : Աւելի լաւ կը մաքաւես, եթէ զգաս որ ինձ սպառնացող վտանգը սպառնում է ե քեզ :

Քարողով ժողովուրդին յեղափոխական չէ կարելի դարձնել, քարողով միայն նրանց վրա է ազդում, որոնք օրդէն ըմբոստ են, բայց ուղղութիւն, ճրագիր չունին իրանց ըմբոստութիւնները զորոպրելու :

Ժողովուրդը ամէն պարագայի մէջ հոսանքին է ենթարկվում : Եթէ ըմբոստանալու հոսանքն է զօրեղ, նա բազմութեամբ այդ հոսանքի մէջ է

նետվում : Եթէ ստրուկ մնալու տրամադրութիւնն է աւելի զօրեղ նա ստրուկ է մնում :

Ես մի առանձին ուշադրութեամբ հետեւեցի Սիբիրի աքսորականներին : նրանց մէջ աւելի փախչելու փորձեր են անում նրանք, որոնց յայնցանքները ըմբոստութեան ճիւղին կարելի է վերագրել : Սողաղ, համեմատաբար անմեղաքսորականները չեն մտածում փախչել, նրանց մէջ փախչել փորձողները հազարապէս են :

Քարողացիներ փորձեց ազատվել, որովհետեւ ի ծնէ նա ըմբոստ է : հայը մինչեւ օրս բազմութեամբ այդ փորձը չէ արել : որովհետեւ նրա համար կեանքը միշտ սուղ է եղել : Այսօր է միայն հայ ժողովուրդի մէջ ըմբոստութեան ոգին զարգանում, զանազան պատճառների ազդեցութեան տակ : Եթէ Բերլինի դաշնագիրը չը լինէր գուցէ այն մէջ այդքան ըմբոստութիւն էլ չը լինէր : կարծես Եւրոպացիները դիմամբ այդ խոստումները տուին եւ չը կատարեցին, որպէսզի տեսնեն թէ հայը ս'ըջով փախազ ունի ազատ ապրելու, եւ որ չա՞փ ընդունակ է գնահատել ազատութիւնը :

(Շարունակել)

յու այդ տարբերութիւնը խելացիութեան արդիւնք է, աւելի լաւ կը լլար որ հայը այդչափ խելացի չըլլար: Գոնէ իմ կարծիքովս, կարծիք է հասարակ կըրնայ զիս մեղադրել այսպիսի կարծիք ունենալուս համար:

ԿԵՏ

ԳՐԱԿԱՆ ՆԱՐԺՈՒՄՆԵՐ

Ըսթուէ-Բլաքէր անուն կիրճին մէջ թէ 5-6 օր առաջ ընդհարում մը տեղի ունեցաւ Միքան աշիրէթին հրամանատար համիրիէ Մուսթաֆա փաշային և Նէրնախի ցեղապետ Ալայէ Սօր Մէհմէդ ալայի միջեւ: Մուսթաֆա փաշայի մարդերէն սպանուած են 15 այր ու կին մը և 9500 չորքտանի (ոչխար, շորի, այծ) յափշտակուած են, իսկ Մէհմէդ ալան մարդու կամ ինքնական ու է ֆլաս չէ կրած: Այս ընդհարումները գրեթէ առանց բացառութեան ամէն տարի կը պատահին և կը տեսնեն մինչեւ 5-10 օր, եւ ամէն տարի ալ Սլեյքէն, Բաղբէն զօրք կը զրկուին անոնք առանց կամ աւելի ճիշդը կողմնակցական ոգով Մուսթաֆա փաշայի շահէրը պաշտպանելու համար, որովհետեւ Ալայէ Սօր միշտ հակակռակ արական ու հակահամրդական գտնուած է և 20-30 երկար տարիներու ընթացքին մէջ իր կաւածական տուրքէն ու տասանորդէն (էօշը) փարս մը իսկ չէ վճարած: Այս տարի ալ երկու վաշտ զօրք զրկուած էր երկու հակակռակորդները հաշտեցնելու և խաղաղութիւն հաստատելու համար, սակայն ձեռք առնուած միջոցներն ու սպառնալիքները այս տարի ապարդիւն անարդէր դատապարտեցան:

Պէտրիսան փաշայի թոռներէն երեք անձ, որոնց զխաւորն է Մէհմէտ պէկ՝ Պօհթան գաւառին Նէխէ-Հովար գիւղը քաշուած լռիկ մնչիկ հողադուրծութեամբ միայն իրենց ապրուստը կը հայթայեցին, ողբալով միանգամայն իրենց փառաւոր անցեալին վրայ: Սակայն վերջերս չի կրնալով հանդուրժել Միլիանցի Մուսթաֆա փաշային և իր աշիրէթին անլուր կեղեքումներուն, զլուխ վերցուցած սպաստամբական նոր շարժում մը ստեղծելու և իրենց անցեալ փառքին տիրանալու իրական ճիգեր լընեն: Համիրիէ գունդերն ու Պ. թիւրի և Տիարպիւրի կուսակալութիւնները, մեծ կարեւորութիւն տալով այս նշանաւոր գերդաստանի ֆլասու կար զարթնումին, իրար անցած են: Թնդրին հետեւանքէն ահա բեկած՝ սուար թուղ զօրք կը համախմբեն ձիւղէի և Պօհթանի գաւառները:

Եթէ Մէհմէդ պէկ ինքնական օժանդակութիւն և բարոյական աջակցութիւն գտնայ քաղաքական մեծ յեղաշրջում մը կրնայ առաջ բերել երկրին մէջ...

Դրօշակ

ԱՆԳԼԻԱ

Անգլիա ֆինանսական տագնապի մէջ կը գտնուի: Ամէնէն հարուստ պետութիւնը այսօր փոքրիկ ժողովուրդի մը դէմ մը զած պատերազմին պատճառաւ, կտրուելի կրկին փոխառութիւն ընել:

Սակայն միայն ատ տագնապը չէ որ Անգլիան կը նեղէ, Երկարատեւ պատերազմը, դրամական և մարդկային ահագին զոհերը, պօսէրներուն անընկճելի մնալը և հետզհետէ աւելի յանդուգն գառնալը չափազանցօրէն կը խռովէ անգլիական ժողովուրդը:

Ամէն կողմէ դժգոհութիւն կը լսուի կառավարութեան դէմ, ամէն կողմէ կը մեղադրուին զըլիտար հրամանատարները, նախարարութիւնը կը պահանջեն շտապ վերջացնել այդ շարժումաւի պատերազմը, որ քամեց Անգլիոյ ծովը, ու զեւ քամելու վրայ է:

Լորտ Բիչնէր զօրք կուզէ. Անգլիա զինուոր չունի, անգլիացիին չի ուզեր երթալ կուրի գաշտ, և Անգլիական կառավարութիւնը ստիպուած է ուրիշ երկրներու մէջ փնտռել:

Երոպական ժողովուրդներու աղքատ դատակարգը, անգործ մնացած բանուորները, մանաւանդ Իտալացիք, ահագին ամուսկաններով կը համաձայնին երթալ թրանսպալ, պօսէրներուն դէմ պատերազմելու:

Անգլիոյ մէջ վաճառականութիւնը ահագին ֆլաս կրեց այս երկու տարուան մէջ:

Ներկայ երկու տարիներուն մուտքը զգալի կերպով պակաս է նախորդ տարիներէն և այդ ամէնը անօգուտ, անարդար պատերազմի մը պատճառաւ:

Գուցէ երբէք Անգլիա այս վիճակի մէջ գտնուած չէ եղեր:

Եւ այդ ամենը արդիւնքն է շուէն, փառամոլ քաղաքագէտներու յիմարտութեան:

Գոռոզ, հարուստ, ամէն ձախողութեան հանդէպ միշտ պաշարիւն Անգլիական ժողովուրդը, այսօր կը տապալակի, կը յուզուի կը բարկանայ, որովհետեւ չի կրնար վերջ տալ այն պատերազմին որ տարի մը առաջ արդէն վերջացած հրատարակուեցաւ: Գիտուն աղուէսը, երկու ոտքով

թակարգը կիյնա, Հիմա ճիշդ Անգլիան այդ դրութեան մէջ է. ոչ միայն երկու ոտքով, այլ չորս ոտքով թակարգի մէջ ինկած է:

Էն.

Ն Ո Ւ Ի Բ Ա Տ Ո Ւ Ո Ւ Թ Ի Ն

Որբարնամիս Գործ, ժողովը Մամուլիթի հայ գաղթականներէն նուէր ստացած է 40 ֆրանք և նորանիկ ետփութանէն մէկ ֆրանք, ուստի Գործ, ժողովս կուգայ հրապարակաւ շնորհակալութիւն յայտնելու ազնիւ նուիրատուաց:

Ի գիմաց Գործ, ժողովոյ (Կ ի Բ)

Բ Ե Թ Ի Տ Ր Ա Կ Ո Ւ Լ Է Վ Ի Դ Ա Տ Ը

Երէկ հոկա. 5ին նշանակուած էր Բեթր Տրակուլէվի. թերթիս խմբագրապետ Արվախի Իսակի դէմ բացած դատը:

Տրակուլէֆ Արվախին գատի տուած էր անոր համար որ, իբր թէ վերջինս Մակեդ. Բ. Կօմիթէի նախագահ Պորիս Սարաֆօվին յայտնած ըլլայ թէ Բ. Տրակուլէֆ սեփականացուցած է յիսուն հազար ռուպլի, զոր Ռուսիոյ մէջ հաւաքուած յօգուտ երբեմն գոյութիւն ունեցող Սթրանձա ընկերութեան, որուն նախագահ եղած է Բեթր Տրակուլէվ:

Ժամանակին երբ այդ լուրը իրաւունք մէջտեղ նետեց Արվախին հերքեց:

Սակայն, ինչպէս կերբեի Տրակուլէֆ շտա տրամադիր է Արվախին պատճառած տեսնալ, Մակեդոնական Կօմիթէին վրէժը Արվախին կուզէ լուծել:

Իտար յաջողութիւն:

Դատը յետաձգուեցաւ իրեն, Բեթր Տրակուլէվի առաջարկութեամբ, որովհետեւ զխաւոր վկան՝ Սարաֆօվ ներկայ չէր:

Բ. Տրակուլէվ այնքան գրգռուած է Արվախին դէմ, որ գատի տալը իրեն չի բաւեր, այլ եւ դատարանին մէջ սպառնալիքով յարձակեցաւ վերջինիս վրայ, զայն վախցնելու, սարսափեցնելու մտքով ինչպէս կերբեի, սակայն չը համարձակեցաւ դպչիլ:

Մենք խորհուրդ կուտանք Բ. Տրակուլէվի ինքզինքը քիչ մը զսպէ, հիմա զինքը դատի տալու լաւ ժամանակն է բայց մենք կը ներենք, որովհետեւ մեզք է և կը հասկնանք իր վիճակը:

Չը մտնանք յիշել որ նոյն օրը Բեթր Տրակուլէֆ նոյնանման դատ մը բացած էր և պուլկարի մը դէմ որ նոյնպէս յետաձգուեցաւ:

ԹՈՒՐԲԻՈՅ ՎԻՃԱԿԸ

Հսկանքներ Կին Թանի Պօլսէն կը հեռագրեն թէ մինչեւ հիմա Բ. Գուռը պատասխան մը առած չէ Լօրանտօյի խնդրոյն մասին:

Չինովիէֆ անցեալ ուրբաթ տեսակցութիւն ունեցեր է Սուլթանի հետ, և չի պահանջու Ռուսիոյ միջամտութեան արդիւնքը, ամէն կերպ խուսախաբեր է խօսել Փրանսական գործերու մասին:

Չինովիէֆ ժամի մը չափ Սուլթանին հետ խօսած է Հայաստանի մէջ տեղի ունեցած վերջին դէպքերու մասին ինչպէս և Ալպանիոյ: Պնդած է վերջ զնեւ Հայաստանի մէջ տիրող ներկայ կացութեան, միջոցներ ձեռք առնել անկարգութիւններու առաջքն առնելու համար, որոնց հետեւանքը կործանարար պիտի ըլլայ:

— Հուստի գործակալութիւնն ալ կը հաղորդէ որ Բ. Գուռը դիմած է Պանք Օթօմանին և Անատօլի երկաթուղի ընկերութեան կանխավճար մը ստանալու և ըստ այնմ կարգադրուելու Լօրանտօյի պահանջքին խնդիրը: Պարոն Պարսի հրահանգ ստացած է Բ. Գուռը շտապելով:

Թանի սեպտ. 30ին Պօլսէն հեռագրով կը հաղորդեն թէ լուր կը պըտըտի որ Թուրք կառավարութիւնը պիտի համաձայնի Իտալի կառավարութեան հետ ալպանական խնդրի մասին բանակցութիւններ տեղի ունեցնելու երկու կառավարութիւններու միջեւ: Իտալիան կը խոստանայ եղեր յարգել Թուրքիոյ ունեցած իրաւունքները Ալպանիոյ վրայ, իսկ Թուրքիան ալ կը խոստանայ արտօնել Ալպանիոյ մէջ դպրոցներ հիմնել, հիւպատոսարաններ հաստատել, և վաճառականական գործակալներ ունենալ:

Բ Ի Ր Յ Ե Ս Ս Օ Ր Վ Ի Ի Թ Ս Վ

Պէրլինի մէջ մեծ շքով կատարուել է հաշակաւոր զինական Վերիսովի 80 ամեա տարեդարձը:

Հանդէսին մասնակցեր են աշխարհի բոլոր զինականներու կողմէն ներկայացուցիչներ: Հանդէսը տեղի ունեցեր է նոր շինուած ախտարանական ձեմարտին մէջ:

Վերիսովը ընդունելու երբեք ծափահարութիւններով որ տեսեր է քանի մը վայրկեան:

Վերիսով ճառ մը արտասանել է, որ տեսեր է մօտաւորապէս երկու ժամ եւ որուն մէջ ներկայացուցիչը է ախտարանութեան մէջ կատարուած յատուազիմութիւնները:

Գերմանիոյ մէջ կատարուած աշխատութիւններու մասին խօսելէ յետոյ, Վերիսով մատնացոյց ըրեր է Պօլսէնի համալսարանին մատուցած ծառայութիւնները, մասնաւորապէս բրօքէստօր Պաքսէլիինը:

Շատ մը զինականներ ճանորդ պատասխանել են Վերիսովի դովերով հաշակաւոր զինականը:

Կօմ Պիւլով Գերմանիոյ արտաքին գործոց նախարարը՝ շնորհաւորական հեռագիր մը դրկեր է Վերիսովի, որուն մէջ գիտականին մեծ գործերը կը ճանչնան, որոնք փառաւորներ են Գերմանիան և ծառայել են մարդկութեան բարիքին:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պատրիարքարանը որոշել է Մշոյ առաջնորդարանէն հեռագրով ուղել Բաբկէն վարդապետի առաջնորդական տեղապահութեան ժամանակի ինքնագիր հաշուեցուցակները և քննել թէ պատրիարքարանէ զրկուած զբառներէն խորուած ու նշանակեալ նպատակներէ դուրս գործածուած գումարներ կան արդեօ՞ք :

Որովհետեւ Մշոյ պաշտօնական մարմինները նոյն իող Բաբկէն վարդապետի ինքնագիր հաշուեցուցակէն ստուգած են ու պատրիարքարանի գրած որ Բաբկէնի քով ու թէ 35 ոսկի, այլ 160 ոսկի մնացել է :

— Նպատից սնտուկին յանձնատուրը որոշել է : Էլլլլլ զիւլի կարօտելոց համար 20 ոսկի նպատակ զրկել և տեղւոյն վարժարանին ուսուցչին ամսաթոշակը երկու ոսկի վերածել : Նաեւ որոշել է 20 ոսկի զրկել Շապին Գարահիսարի Թամպարա գիւղաքաղաքի հրգեհէն փաստածնութուն համար :

— Սահակ եպիսկոպոս Խապայեան սեպտ. 15ին Կիլիկիոյ 9 վիճակաց առաջնորդական տեղապահներուն գրքի է որ կաթողիկոսական ընտրութեան համար ներկայացուցիչները պատրաստ գտնուին և հեռագիրը հասնելուն պէս Առանայ ուղեւորուին :

— Փիլիպպիէ հայ տիկնանց սրբախնամ ընկերութիւնը 20 լիրա զրկել է պատրիարքարան, պաւառային որբերու համար :

— Պարսից գահաժառանգը իմանալով որ Պարսկաստանի հալերը հակալքօլական ընկերութիւն չհիմնելու են, շատ գոհ մնացել է և նիւթապէս ալ նպատակ ստացել է :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պ Ո Ւ Կ Ա Ր Ի Ա

Իշխանի անձնական քարտուղարը Իշխանի կողմէն յայտարարած է որ պուլկար կառավարութիւնը ջանք չի պիտի խնայէ թիօնը յափշտակող աւաղակները ձերբակալելու, եթէ անոնք Պուլկարի անցնին :

— Պուլկար կառավարութիւնը որոշած է ազջիկներուն ալ թոյլ տալ բարձրագոյն Սօփիաի զբարոցին մէջ ուսանիլ :

— Մակ. Բարձր. Կօմիթէի նախկին փոխնախագահ պ. Տափտով «Նարոտնի Բրավա» թերթի մէջ կը հերքէ Պորիս Սարաֆօֆի մասնակցութիւնը Միսս

Սթօնի առեւանդման գործին մէջ ևւ այդ լուրը տարածողները Մակեդոնական դատի թշնամի կը հռչակէ :

— Մօտակայ լրացուցիչ երեսփոխանական ընտրութիւններու համար ամէն կուսակցութեան կողմէ ալ եռանդով պատրաստութիւններ կը տեսնուին, ամէն նշանաւոր կուսակցականները պետոյտի ելած են իրենց ընտրելիներու ընտրութիւնը յաջողցնելու համար :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Պրիւքսէլի մէջ լուր տարածուած է թէ զօրավար Պօթա բուլղեր է Բիչնէրի Թրանսվալի ընդհանուր դատախազը հրացանի բռնելուն համար Պօթա յայտարարած է որ ինք ալ անգլիացիներու գերութեան հետ այդպէս պիտի վարուի :

Բէֆթաուսի մէջ 53 ապստամբներ կախաղանի դատապարտուցան : Լօրտ Բիչնէր մշտնջենական բանտարկութեան փոխեց այս պատիժը :

Սեպտ. 15էն ի վեր 18 պօէր հրամանատարներ գերի բռնուել են և աքսորուել են :

Ամսթերտամի Հոլանտական նաւատուններու գործաւորները իրենց ամէն օտար արհեստակիցները հրաւիրել են 1902ի յունուար 1էն սկսեալ ալ բեռ չը բեռնեն անգլիական նաւերը, ոչ ալ բեռ պարպեն ասոնցմէ :

— Լօրտ Բիչնէր կը հեռագրէ որ պօէր նշանաւոր հրամանատար Շիպէրս գերի բռնուած է մէնթրալ Թրէնչէն :

Չ Ր Ն Ա Ս Տ Ա Ն

Չինացի պատուիրակները գետնական մարմնոյն երեցագոյն անդամ Սպանիական դեպտանին յանձնելու են 450 միլիոն թահէլի պարտ մուրհակ մը որ չինական աուգանքին գումարն է :

— Քանթօնի փոխարքան Լօնտրայի Չինական գետնական հեռագիր մը ընդունել է որով իրեն կը հազորդուի թէ Լօնտրայի նաւահանգստէն մեծաքանակ զէնք, տինամիտ և պատերազմական մթերներ զրկուած է Քանթօն :

Փոխարքան իմացուցել է տեղական մաքսարաններուն :

Ա Ն Գ Լ Ի Ա

Պաշտօնապէս յայտարարուած է որ Անգլիոյ պետական պարտքը 1900 մարտ 31 սկսեալ մօտ

70 միլիոն ոսկիով աւելցել է : — Անգլիոյ մէջ խիստ միջոցներ ձեռք կառնուին ֆրանսական կրօնաւորներու Անգլիա գաղթելու հոսանքը դադարեցնելու համար :

Յ Ր Ա Ն Ս Ա

Լուր կը պատի որ Ֆրանս թրքական դօժերը կարգադրուելէն վերջը Քօնսթանդուլու մը պիտի փոխարինէ :

Ա Յ Ղ Ա Ն Ի Ս Տ Ա Ն

Սիմլաէ կը հեռագրեն թէ Քարուլէն ստացուած նամակներ կը հաստատեն որ երկրին մէջ կատարեալ խաղաղութիւն կը տիրէ :

Ա Մ Ե Ր Ի Կ Ա

Ուաշընթընէ Տէյլը թէլէկրաֆ լրագրին եկած հեռագիրը կը հազորդէ հետեւեւորը :

Չանազան եկեղեցիներու հովիտները բազմաթիւ խնդրագրեր ուղղած են ամերիկեան կառավարութեան միջամտելու Միսս Սթօնը աղաթելու համար : Ճըշտապէս չեն գիտեր թէ ո՞ր կը գտնուի Միսս Սթօնը : Միայն այդչափը գիտեն որ աւաղակները շատ մօտիկ են Պուլկարիոյ սահմանին, որպէսզի եթէ թուրքերը հալածեն զիրենք, կարենան շուտով մը Պուլկարի անցնիլ :

Լուր տարածուած է որ Ամերիկեան գերհիպատոսին գիմուսներուն վրայ, որ ըրած է պուլկար կառավարութեան և Սելանիքի նահանգապետին, որոշուել է պուլկար և թիւրք զինուորներ խառն վաշտ մը կազմել աւաղակները ձերբակալելու համար :

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Բրզանսօնի «Տէրէշ Բէրուպի» լրագիրը իր սեպտ. 21ի թիւով Սուլթանի ծննդեան 59րդ տարեդարձին առթիւ, «Դիւանագէտ մը» ստորագրութեամբ, հակիրճ մէկ տեսութիւնը կը նշանակուի և հետեւեալ տըխուր տողերով կը փակէ այդ տխուր մարգուն կենսագրութիւնը :

«Իր անքուն գիշերներուն մէջ ամէն տեղ զաշոյնը կը տեսնէ : Ինքզինքը կը բանաարկէ իր պալատին մէջ ինչպէս բանտի մը մէջ : Մարդոց այս թշնամին բոլոր մարդիկը իրեն թշնամի ունի : Զգուշութիւններու խենթութիւնը զանգաղօրէն թափան

ցած է այս լաւ հասարակչուած ուղեգիրն մէջ : Արգիւլ Համիդը բուրժուա մը, բանուր մը դարձուցէք, թողուցէք իրեն զինք շրջապատող բոլոր սարսափները, անշուշտ չի պիտի կրնար ապրիլ ընկերութեան մէջ : Ինքնասպան պիտի լինէր : Արգիւլ Համիդ անոր համար միայն կը շարունակէ ապրիլ, որովհետեւ կարելու թիւն ունի ինքզինքը գրեթէ բոլորովին մեկուսացնելու կենդանի մարդերէն : Մարդ պիտի ուզէր չը ճաննալ այն բոլոր խորհրդագրաւորները, զորս այս խաւար հոգին իր մէջ կը ծածկէ, ամբողջովին գուշակել այս մարդը, որ արիւնոտ ճամբէ մը իր հայրութիւնը դէպի վերջնական աղետն կը քալեցնէ :

Լ Ո Յ Ս Տ Ե Ա Ի

Յ Կ Պ Յ Ն Ո Ւ Ք Ե Ա Ն Ի

Նոր Բնթերցարան (պատկերադարձ) Առաջին տարի (Երկրորդ տպագրութիւն բարեփոխուած) Դին 70 Սնթ. Կը ծախուի վառնայ Մ. Գալբակ ճեմարի քով :

Թ Ա Տ Ր Ո Ն Ս Ա Ն Թ Ր Ա Լ

— (J) —



Հայ Դեր. խումբը առաջնորդութեամբ Ա. Պէնէլեւնի վաղը հինգշաբթի գիշեր մեծաւ պատրաստութեամբ պիտի ներկայացնէ :

Գ Ե Տ Ն Ա Փ Ո Ր Ք Ա Ր Ա Յ Լ Ը Տրամքօտի 5 արար.

Նոյնպէս կիրակի գիշեր առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացուի Բ Ժ Ի Շ Կ Ո Ճ Ր Ա Փ Ո Ր Ծ Ը Տրամքօտի 5 արարուած 2 պատկերով

Ե Ի Ր Ո Պ Ա Յ Ի Հ Ա Յ Ո Ւ Ս Մ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

Եւրոպայի Հայ. Ուս Միութեան նամակ ուղարկելու ևւ առհասարակ ամէն տեսակ գիմուս ընելու համար պէտք է գիմել հետեւեալ հասցեով Իւնիոն Տէ Զիլիսիան Արմ. լիօրդր ին սը լիօլ սը Շիլի 2

Սուխա Ժընէվ Կարգադիր Յանձնաժողով

Отговорникъ: Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна